ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 2290-Ա « 09 » հունիսի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
09.06.2025թ.
հ. 2290-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	«ՀՐԱՎԱՐ» ՍՊԸ	Բրյուսովի փողոց, հ.6	հողամաս	«ՀՐԱՎԱՐ» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Բրյուսովի փողոցի հ.6 հասցեում գտնվող շինությունների /սեփ. վկ. հ.1558889/ բաժանման հատակագծով առանձնացվող 1405.1քմ մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝ Արշակունյաց պողոտա, հ.16/4	01063SVEGBYQ	
2	Սերյոժա Շահինյան	Հաղթանակ թաղամաս, 5-րդ փողոց, հ.102 և հ.102/1	հողամաս	Սերյոժա Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող, Հաղթանակ թաղամասի 5-րդ փողոցի հ.102 և հ.102/1 հասցեներում գտնվող շինությունների զբաղեցրած հողամասերին /վկ. հ.01102021-01-0095 և հ.01102021-01-0271/ ըստ միավորման հատակագծի, տրամադրել մեկ միասնական հասցե՝ Հաղթանակ թաղամաս, 5-րդ փողոց, հ.102	01073BQSAQUN	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**